

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար տարեկան 10 ֆրանկ. վեճակական 5 ֆրանկ : Արտասահմանի համար տարեկան 12 ֆրանկ, վեճակական 6 ֆր.

ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Կրօնքիւնք էս չեն տուիր :

Ծանուցում տողը 20 սանթիմ է :

ՇԱՐՇՈՒՄ

Նամակ եւ դրամ դրկել / յարգութեամբ հասցիին .

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна.

Redaction du journal „Charjourn“ Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՄԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—X—

Երկու և սֆ, Գաւեր-Արշաիր. — Կոյր Ջոքրակահարը (հերքում), Վահան Մանուկեան. — Որո՞ւ Կրսես, Կ. Ա. — Անտոնազիր Նաւակներ. — Փայտասակների Յիշատակարան (Հասգեղի Կոտորածը), Շաւարշ. — Շնորհակալութիւն. — Վարդ-Պատրիկոյի Յիշատակարանը. — Բարսիպիան Դեպքեր. — Թորքերէն մաս :

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

—)(—

Բողոքներ կուգան ուր մարդ մամլոյ ազատութենէն կը խորշի : Արտասահմանի հայ լրագրութեան մէկ մասը ձեռքէն եկածը չի ինչայեր այդ զգացումը օրէ օր շեշտելու համար : Ասկէց առաջ ազգային ամէն կարգի շարժումներու վտակոտ արձագանգ հանգիստանալէ ետքը, այսօր նոյն լրագրութիւնն է որ մրահամուռ է ամբողջ յեղափոխական տարրը մէկ շրէ անցընելու, առանց գէթ լուր յոռիէն, փառամոլ խաչագողը՝ անկեղծ անձնագոհէն որոշելու ձանձրոյթը յանձն առնելու :

Օրուան նորաձեւութիւնն է. և իրենք միշտ ամբողջին արամազութիւններուն ուշագիւր, անոնց վրայէն կը ձեւուին, փոխանակ վարելու կը վարուին, ճշմարիտ կեղծաւորներու նման մեղանշելով իրենց իսկական կոչման գէժ :

Եթէ հասարակութիւնը իր տառապագիւն վիճակին մէջ պահ մը տրտնջաց, ասոնք հայհոյել սկըսան. և փոխանակ միտքարելու զայն իր ցաւերուն մէջ, փոխանակ յուսադրելու՝ յուսահատեցուցին :

Ազգին զանազան տարրերուն մէջ անմիաբանութիւն, ատելութիւն, անվստահութիւն սերմանելու համար բան մը չլինայցին, ու չախագանցութիւն չըլլար եթէ ըսենք թէ թուրք թերթերուն արտասահմանեան նոր տրպագրութիւններուն վերածուցան :

Բազմաթիւ ք զանոնք. նոյն լրագրութիւնները, նոյն սրբապղծ ծովիւնները պիտի տեսնաք սփռուած երկուքին մէջ : Իրժուարին է որոշել թէ ո՞րն է թուրքը, ո՞րն է հայը : Երկուքն ալ խոպոտ ձայններն իրար խառնելով կը ծաղրեն այնպիսի գործեր որոնք խոհեմ ըլլան թէ յանդուգն, անձնուրաց քաջութիւն ըլլալէ չեն դադարիր. և հետեւաբար՝ իրաւունք ունին եթէ ոչ հիացում՝ գէթ քիչ մը յարգանք պահանջելու : Բաբկէն մը Լէոնիտաս մը կարժէր. բայց եթէ տիեզերք Լէոնիտասներու արձան կը կանգնէ, մենք՝ ազատութեան սիրոյն համար մեռնող, կոոր կտոր ըլլող մեր զաւակները ծաղրանքի տիպովը ծեփել կուզենք :

Մեր կարգ մը բորբոսած գրողներուն գործն է այս. և այսքանով չբաւականանալով, նոյն տիպ մը ամէն կողմ կը սրսկեն, աչքեր կուրցնելու, թող չի տալու համար որ հայերը զիրար յտակ տեսնեն ու հասկնան : Անմոռանալին Պատկանեան որ «Թքե՛լ էր» անօգուտ գրիչներու վրայ, ի՞նչ պիտի ընէր տեսնելով ասոնք, որ անօգուտ ըլլալէ աւելի բան մըն են. վրասակար :

Թերթ մը չգտանք, գոնէ հազուադէպ էին անոնք որ ձեռք տէին եղբայրական սէրը սփռել իրենց շուրջը, թերթ մը որ հայհոյելէ ուրիշ բան մը ընէր աւելի ազգօգուտ ու բանասեր, որ գէթ միեւնոյն տխուր յանկերգը յեղիցելու հարկին մէջ չմնալու միջոցները փնտռէր :

Հայհոյելով, ծաղրելով ազգ մը կը փրկուի :

Եթէ մենք ալ միտէինք նոյն ազգազաւ դերը կատարել, ի՞նչ հարկ կար «Շարժում»ը ստեղծելու. թերթ կը պակսէր : Զէ՞ք տեսնար որ մէկը ձաղկելու, միւսը քննադատելու, միացնելու պատրուակին տակ, ուրիշ մը յանուն սոցիալականութեան կամ զիւանազիտութեան, հակազգային մի և նոյն նպատակը կը հետապնդեն, հետզհետէ լարելով հայերուս մէջ ինկած ցաւալի

հակառակութիւնները : Ո՛չ մէկը մտքէն կանցունէ ասք խօսք մը արտաբերել եղբայրներու մէջ միտած սառի կտորները հալեցընելու :

Ահա այդ պառակտողի, ունայն վայրահալի դերն է սակից յաւէտ կը խորշի «Շարժում» : Իր մեծագոյն իղձն է որ ամէն հայ, ըլլայ չէ՞ղք անհատ, Հնչակեան, Իշնակցական, Արմենական կամ ուրիշ բան մը, մուտք ունենայ իր ծոցին մէջ : Վայր մը դառնայ եղբայրսիրութեան, ուր ամէն ճշմարիտ հայեր, յեղափոխական թէ ոչ, կարենան իրար հանդիպել, ձեռք ձեռքի տալ, զիրար հասկնալ ու սիրել. բաւական է որ սեմէն մտած ատեննին դուրսը թողուն ամէն նկատում, հաշիւ, և կուսակցական մարդու տեղ հայու պէս մտածեն :

Ինչպէս առաջին օրէն յայտարարած էինք, «Շարժում» իր սիւնակները սիրով տրամադրութեանը տակ կը դնէ ամէն անկեղծ հայու որ օգտակար բան մը ունի ըսելիք իր տառապող ազգակիցներուն, սա համոզումով որ երբ մենք անգամ մը յաջողինք խախտած համոզումները վերահաստատել մեր մէջ, փտած տարրերը ինքնին պիտի թօթափին ինչպէս դոստաճած տեսիլները վերակենդանացած ուտին վրայէն, և դիւրաւ պիտի իրականանայ այն սուրբ միութիւնը զոր մինչեւ հիմա եղբայրասպան կռիւներու դաշտին վրայ կը փնտռէինք :

Ապահով ենք թէ մեր այս կարգադրութիւնը շատերուն հաշտոյն յարմար չի պիտի գայ : Բայց ի՞նչ փոյթ, ոչ թերթական գործակալ ենք, ո՛չ շահամուլ, և ո՛չ ալ մեր բովանդակ կեանքին մէջ բիծով մը արտաստորուած : Անոնց հետ գործ չունինք : Իբրեւ ճշմարիտ հայեր, զիտակից ազգին ցաւերուն, և խորապէս զանոնք զգացող, փրկութեան ձառագայթ մը նշմարել կը կարծենք մեր ուղղութեան մէջ, որ սէրը իրեն հիմ ունի : Միութեան ձեռք կը կարկանդակենք ձեզ ամեն

նուդ որ Հայ անունը կը կրէք : Կուզէ՞ք կուռիլ մեզ հետ մեր հասարակաց ամէն կարգի թշնամիներուն գէժ :

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԻՐ

ԿՈՅՐ ԶՈՒԹԱԿԱԶԱՐԸ

—)(—

Ինչ և ինչ անհոգ խօյ միսերու տուած
ֆեզ,
Կր միտնախ երազակի ծովուն
մեջ,
Եւ մոռնալով պահ մը ցաւերդ ա-
ղեկեզ,
Կուգես մեղմեղ սրտիդ կրակը ան-
շեջ :

Ու անս ձայն մը շխարքոյ, մեղմո-
րիկ,
Ընկերացած շարի մը նորք քրքու-
միկ,
Կոյրսանայ միջոցին մեջ հե-
ռուէն,
Իսկծկելով շխարք քոյր անուր-
ջիկ :

Կոյր մըն է ան. ջոքրակահար մը մու-
րիկ,
Ինկած հոստեղ զարթակակի հոսան-
ֆով,
Որ դուռն դուռ կը սասանի քախ-
ոիկ,
Առաջնորդուած լոկ իր երգին սշաց-
ֆով :

Այ՛ֆերը գոց, սակայն մասնէն և և
նարսար,
Ձայնն աչ անոյշ, իբրեւ ուժգին
մերք բողոք,
Կը բարձրանայ, մերք աչ դարձած
նորք կիթառ,
Կը մարտի ջոքրակիկ հետ ան-
դոք :

Հայրենիքի ունի անձուկը ան-
հուն,
Արցունքներով արքոյջ յեցուած է
հոգին,
Եւ անկարող դրկել զանոնք աչե-
րուն,
Կը վազցունէ շարժումն մեջ ջո-
քակիկ :

Ու երբ լուծ, կուղղի ֆայրերդ դեպ
սուսջ,
Օրորուելով փողոցին մեջ կողմ-
նակի,
Դեռ կը շեւ շուրջդ ողբեր ու հա-
նաչ,
Որոնք հիւսակ կեղծն սրտիդ ող-
ղակի :

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ
18 Փետր. 1898

ՈՐՈՒԻ ԿԸՍԵՍ

—)(—

Մեր նախընտրած թուով հրատարակած էինք Շուտուէ զրկուած նամակ մը, որ, քահանայի մը խնդրոյն առթիւ, ժողովրդին մէկ մասին՝ օտար եկեղեցի յաճախելու սպանալիքը կը յայտնէր: Եւ արդարեւ ճիշդ այդ տիրահունչ տողերն էին որոնք քահանայի մը ընթացքէն աւելի, մեզ գրգռած էին այդ նամակը հրատարակելու:

Շուտուայի վրայ չէինք մասնաւորեր մեր խօսքը, բայց մէկէ աւելի տեղերէ միշտ լսուած են այդ կարգի տխուր արձագանգներ:

Մինչև ե՞րբ կարգ մը ինքնաւարտ ազգայիններ այս կամ այն երկրին մէջ այդ յաւերանական խրատուելակը հանրութիւնը անարեւելու պիտի գործածեն: «Օտարին պիտի դիմենք, բոս պիտի ըլլանք, պապին ոտքը պիտի լընանք»... և յետոյ:

Այդչափ թոյլ է մեր վերաբերումը կրօնքի հանդէպ, որ հոգեւորականի մը և կամ այն ինչին մէկ արարքը այդ աստիճան անպատուարներ միտքերն ներշնչէ: Ի՞նչ ստորնացում և ի՞նչ հիմնական պակասութիւն ստեղծուած առնականութեան:

Ազատ երկիրներու մէջ, այդ կարգի քանի մը չնչին զրկանքներու չի հանդուրժելով, ազգային եկեղեցիէն դասալիք ըլլալ միտողները չէին կրնար փոքրիկ դաս մը առած ըլլալ Հայաստանին, որ շատ անգամ ոչ միայն անարժան կրօնաւորներէ կը տառապի, այլ և բարբարոսներուն սուրը կը զգայ միշտ իր վզին վրայ, այլ և հրդեհը կը տեսնայ իր տան ու արտին մէջ, և հալածանքը ամէն տեղ, ու դարձեալ անխախտ կը մնայ իր պապերուն դաւանանքին մէջ:

Ասոնցմէ կը հետեւի թէ ըրեւր անգամ աւելի մեղադրելի են այս կարգի սնամեջ սպանալիքներ ընողները քան թէ մտքերը գայթակղեցնող այսինչ կամ այնինչ անհատը, ըլլայ հոգեւորական և կամ այլ ինչ:

ՎԱՐԳ-ՊԱՏՐԻՎՈՒԹԻՒՆ ԱՍՏԻՍԱԿԱՐԱՆԸ (1)

Ես գրած եմ այս յիշատակարանը միայն այն նպատակով որ մասամբ սպացուցած լինեմ թէ Հայկական յեղափոխութիւնը հայ կեանքի պահանջն էր և ոչ թէ այս կամ այն անհատի գործ: Թէ որքան հասած կը լինեմ իմ նպատակին՝ այդ վերջը կհրեայ: Բայ ի դրանից, ես յոյս ունեմ հայ հասարակութեան առջև մասամբ պարզել այն զէմքերը, որոնք այսպէս թէ այնպէս մասնակցել են Հայ Յեղափոխութեան: Պէտք է լինեմ անկեղծ թէ իմ և թէ ուրիշներին վերաբերմամբ: Թէև համոզուած եմ որ շատերին պէտք է դժգոհութեան պատճառ լինեմ, սակայն, ես առանց քաշուելու և վախնալու այս կամ այն անձնաւորութիւնից, պէտք է բարձրացնեմ լաւին, պէտք է հարուածեմ անարժանին: Մեր ներկայ կեանքը այդ է պահանջում. և ցած է այն հայը որ Հայ Յեղափոխութեան այս փոփոկ վայրկեանում չէ աշխատում մարքի յեղափոխական առարկէն անարժան մարդկանցից և թոյլ է տալիս աղտոտել այն ինչ որ ամենավաւան է ամէն մի ազգի կեանքի մէջ:

Ուրեմն սկսենք:

Եւ ամենէն վեր քննադատելի են մասնաւոր ձեռնհաս մարմինները, որոնք շատ անգամ կարուկ միջոցներու չեն դիմեր երբ հարկը պարտաւորիչ կը դառնայ: Հակառակ ամենուրեք և ամէն բանի, յանցաւորին կը խնայեն. ինչով կարելի է բացատրել այս երեւոյթը:

Գո՞ւթը, մարդասիրութիւնը, ուրիշ նկատուէ՞նք, երբեք արդարացուցիչ փաստեր չեն: Հանրային գործերը ամէն բանէ աւելի պէտք է առաջ տարուին անաշուտութեան հիման վրայ: Փոխանակ յանցաւոր անհատին, անմեղ հասարակութեանը պիտու է: Հոտ է բուն գութը և մարդասիրութիւնը: Մնացածին ազատ էք ձեր փոփոխութիւնը: Մնացածին մը տալ: Բայց որո՞ւ կրնաս հասկըցնել թէ խաբար, ևսութիւնը, կամեականութիւնը, բռնակալութեան տեսչն է որ տանջանք դարձած են մեզ համար, մեր տունը քանգած են. և թէ մեր հանրային գործերուն զուխը գտնուողները պարտաւոր են աւելի հայալսել, աւելի պարտաճանաչ ըլլալ, անաշտ և կտրուկ ինչպէս դաշտնի մը ջինջ պողպատը:

Այս վայրկեանի իսկ ի՞նչ այլեւայլ տեղերու մէջ ազգային յարկերու շուրջը թափառելիք, մէկէ աւելի տեղեր անշուշտ պիտի հանդիպինք ամէն համարում կորուսած, արհամարհելի դարձած հոգեւորականին կամ սղէտ ուսուցչին, որոնք սակայն պաշտպանութիւններու շնորհիւ կը յարատեւեն դայթակղեցնել ժողովուրդը և կամ ամբողջ սերունդներ խամբեցնել: Ասոնք տխուր իրողութիւններ են: Ո՞վ կուրանայ թէ մէկէ աւելի անգամներ, մեծամիտներ ժողովուրդին վստահութիւնը չարաչար խաբելով, կամք քաղեցնելով և կամ թոյլ սրտի մը ձայնին անսալով, իրենց անարժէք պաշտպանեանները ամբխին վրայ բեռցուցած են մակարոյժ անասնիկներու պէս: Ժամանակ է որ այս անտեղութիւնները վերան մեր մէջնեն:

Ինչպէս ձեռնհաս մարմինները իրենց պարտքեր, այնպէս ալ հասարակութիւնը իր իրաւունքները

պէտք է ճանչնայ և պահանջէ զանոնք, առանց ընկրկելու, և մասնաւոր ի սէր Աստուծոյ, առանց օտարին դիմելու պոռոտ և անպատուիչ խրատուելիք սարքելու: Այս է ուղիւ ճամբան:

Բայց որո՞ւ կըսես: Գ. Ա.

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ ՆԱՍՏԱԿՆԵՐ

Ասոնց պատմութիւնը հին է: Նախ՝ «Միութեան փոփոխողաց» կոչն էր որ հրապարակը ողողեց: Յետոյ, հայկական նուագահանդէսի առթիւ դարձեալ կրկնուեցաւ այդ պօզալի ողողումը: Եւ հիմակ—Թաղ. Խորհրդոյ և Հոգաբարձութեան մէջ ծագած իրաւասութեան վէճի մը առթիւ, որ բարեարտարար առանց արտաքին միջամտութեան կարգադրուած է, կըսուի, — նորօրինակ թուցիկ մըն է որ կուգայ բարդուիլ առաջիններուն վրայ: Եթէ մեր կարծիքը իմանալու նուագաբեութեամբ հաս մըն ալ մեզ զրկուած էր, փութանք յայտնել թէ ինչպէս բոլոր աշխարհ, մենք ևս բնական է որ պօզանք ամէն անտորոգիթ թուցիկներէ՝ մասնաւոր երբ անոնց հեղինակները, իրենք ալ ճշմարիտ թոռիցիներ, յիմար բաներ գանձուել այնպիսի պատուաւոր անձերու նկատմամբ, որոնց ազնուութիւնը վեր է ամէն կասկածէ:

Թուցիկը խօլ թափով մը ծանուցանելէ ետքը թէ վառանկ կրթական գործը քայքայման դուռ հասած է, կուսկցնէ թէ երիտասարդութիւնը պարտաւոր է արիւնք թափել առաջին անգամ և համար այդ վտանգին:

Բայց ի՞նչու այդպիսի վին ձեռնարկի մը պահուն այդ հերոսներէն գէթ մէկը ինքզինքը չի ցուցնէ որ ամէն մարդ զինքը տեսնայ ու հաւատայ իր անկեղծութեանը:

Այդ ի՞նչ տեսակ երիտասարդութիւն է որ, ասանկ կենսական գատ մը պաշտպանելու համար, պէտք ե-

ղած քաջութիւնը զգացող տեսանելի հիւլէ մըն ալ չի պարունակեր իր մէջ:

Կատակը մէկ կողմ, բայց կուզէինք գիտնալ թէ ո՞վ է այդ ստահակը որ վատարար մութին մէջ կծկտած պատգամ կորոտայ, ու կրիտասարգութիւնը կանպատուէ:

Այս խաւարի հերոսները կը միզանչեն երիտասարդութեան անունը խառնելով իրենց ստոր արարքին: Եւ եթէ իրենք կը կարծեն թէ այդ կարգի ձախող և անխորհուրդ գրբուածքներ տարածելը քաջագործութիւն է, մենք կը վստահացնենք թէ ընդհակառակը գոհնիկ խաբարայի մը աստիճանին կը հասցնէ զիրենք, և հետեւաբար անընդունակ ու և է ազնիւ դատ պաշտպանելու:

ՓԱԽՍԱԿԱՆԻ ՅԻՄԱՍԿԱՐԱՆ

ՀԱՍԿԵՂԻ ԿՈՏՈՐԱՆԸ

—)(— (5)

Յորեկին՝ ժամուռ ամենէն բարձրագիտակ զիրքն ելայ տեսնելու համար գեղին վիճակը:

Տեսարանը որ պարզուեցաւ աչքերուս առջև, ոչ միայն սարսափելի էր, հապա մասնաւոր հետաքրքրաշարժ: Մուռուսուռ, նեղկուկ, մութին փողոցներու ցանցը քառնելի ոգեւորութիւն մը կը պատկերէր. ամենէն այլանդակ տարազները կրող խալաններու լէզէնները, խառն երիտասարդներով ու մորուսուոր ծերունիներով, ձեռուրնին ճոկաւարած, մոլեգնաբար կը վազէին հայածական հայերու ետեւէ՝ կին, տղայ, երիտասարդ, խելացնոր, կիսամերկ, Երկուրը թեւ կուտար եղկելիներուն, որոնք կը թռչէին գէպ եկեղեցի, փրկութեան այս միակ նաւահանգիստը:

Ուրիշ տեղ, ուրիշ տեսարան. խուճը մը քիւրսեր սակնարկի մէջ կը կտորէին տան մը դուռը, նիստ կը խոսէին ու վայրկեան մը չանցած անհարկին արագութեամբ դուրս

Ա.

Ես ծնուել եմ 65 թուականին. ուրեմն այնպիսի մի ժամանակ երբ սաճկահայերի և թէ ուսանալիքի մէջ սկսելի էր մտաւոր շարժում, ձգտում դէպ ի լուսաւորութիւն, և զգուանք դէպ ի արկական վիճակը: Նազարեան, Աբովեան, Նալպանտեան և Շահապղղ այդ ժամանակ արդէն առսահայ լուսագոյն երիտասարդութեան յայտնի էին, և ունէին իրենց աշակերտները ու հետեւողները հայ կեանքի մէջ: Բարեբախտաբար մեր տան մէջ էլ կար մի քան կամ քսան և մէկ տարիկան ներքեանս զպրոցում: Ուրբա՞ծ Շահապղղի և Նազարեանի հետ անձամբ ծանօթ, լուսամիտ և շատ գեղեցիկ դէմքով երիտասարդ: Գա իմ հերեզորորդի Տիգրանն էր, որը իմ չորս հինգ տարեկան հասակում պարսպում էր վաճառականութեամբ, շարունակ լինում էր Տիփլիս և Մոսկովա վաճառականական գործերով: Մի խօսքով Տիգրանը այն ժամանակվայ լուսամիտ, և բոլորակցած երիտասարդ վաճառականներից էր: Նա ինձ շատ էր սիրում, և իր սէրը արտայայտում էր այն ժամանակ շատ թանկագին նուէրներ տալով և երգեր սովորեցնելով: Այդ երգերն էին Ազատն Աստուած, Հայրենիք Սրբա-

զան, Մայր Արաքսի, Յուրաք Փչեց և Միծեանակ: Այդ երգերը Տիգրանը սովորեցնում էր ինձ իր կուրծքի վրայ գրած, իր աճազին սեւ աչքերը ցողացնելով, լայն և հուժկու կուրծքը ունեցնելով:

Ի հարկէ ես երգերը սովորում էի թո թակի նման, սակայն զգում էի որ Տիգրանի սիրուն և առնական դէմքը փոխվում է այդ երգերը երգած միջոցին. բնական էր որ ես իմ մանկական խելքով չէի կարող երեւակայել թէ կը դար ժամանակ, որ այդ հուշակաւոր երգերի մէջ արտայայտուած գաղափարները և իր զգացի թոյլ զինուորը պէտք է դառնամ: Սակայն այդ բնութեան օրէնքն էր: Ինձնից քսան տարի առաջ ծնված Տիգրանին վիճակված էր միայն երգերը սովորելու, իսկ ինձ միեւնոյն տան զաւակին քսան տարի յետոյ այն երգերի մէջ արտայայտուած իր ձեռքը իրականացնելու համար գործնական կերպով աշխատելու: Շատ պարզ է որ շատ հայ տներ ունէին Տիգրանի պէս երիտասարդ և ինձ պէս մանուկ զաւակներ:

Եթե տարիկան հասակում ես արդէն կարգալ գիտէի, առանց ուսումնարան գնալու. դիտէի Վարդանի անունը, և շարունակ անանում էի Նալպանտեանի լուսանկարը, որի վրա միշտ առանձին խանդաղատան-

քով նայում էր մեր Տիգրանը: Մի օր, չը գիտեմ ինչ պատճառով, յանկարծ տուն վաղեց Տիգրանը բողբոլին գունատուած: Ես առջևը վազեցի. սակայն նա առանց ինձ սովորական գուրգուրանքը յոյց տալու առաջ գնաց և կանչեց:

—Մայրիկ, մայրիկ...
Հօրեղբօրս կիներէ՞վազեց իր սիրական զուկի մօտ, վախեցած. մի քանի խօսք փոխանակեցին իրար հետ ու վազեցին սենեակ: Ես չուարած նրանց հետեւեցի: Եկաւ և մայրս: Նա ինձ ուղեց հեռացնել և ինք էլ գնաց ներս. սակայն ես սկսեցի չի դրի և հետեւեցի նրանց: Նրանք բացել էին բոլոր սնուակները և արկները, դուրս էին հանում թղթեր և լուսանկարներ: Ես ապշած դիտում էի, լուռ և մունջ: Մի քանի վայրկեանից այդ բոլոր բերին խոհանոց և վաւեցին:

Մինչ ըոքը արագաբար լափում էր ստրուկ հայի պատասխարական թոթովումները, հօրեղբօրս կիներ յանկարծ բացազանչեց—Իսկ այն պատկերը, Տիգրան:

—Չէ, մայրիկ, այն պատկերը կը պահեմ, ոչ ոք չի գտնի:
Իրանից յետոյ Տիգրանը էլ չէր նայում Նալպանտեանի լուսանկարի վրա:
(Շարունակելի)

կը թափէին ինչ որ կար տան մէջ, յետոյ ծրարներ կը կապուէին, կը բեռնուէին վայրենիներու կոնակին վրայ ու կանհետանային:

Թալանի վրայ դադարաբար մը տալու համար կը բաւէ ըսել թէ աւելի քան հինգ հարիւր տուններ քսան ժամուան մէջ գատարկուեցան, ու ամայութիւնը արեւոյց հոն ուր մէկ օր առաջ ոգեւորութիւն, կեանք ու եռհեփ կար:

Յատկանշական պարագայ մը. Հասգի կոտորածը հին սերունդը փճացուց. կրնայ ըսուիլ թէ սպանուած վեց եօթն հարիւր հոգիներ չորս հարիւրէն աւելին ծերունիներ էին, որոնք չկրցան խոյս տալ. մինչեւ իսկ անկողին ինկած անդամալոյծ տարեցներ անխնայ խողխողուեցան: Երիտասարդութիւնը, թէեւ յանկարծակիի եկած, յաջողեցաւ կամ խոյս տալով ազատիլ կամ յանդուգն յարձակումներ ընելով իր թշնամիներուն վրայ չիջնալանոնց բերելուն տակ:

Երիտասարդ գաւառացի մը քաջութեան հրաշքով փրկեց իր կեանքը. եկեղեցիէն ներս մտնելուն պէս գետին ինկաւ ոգեսպառ, արիւնլուայ: Սթափելէն ետքը պատմեց զլսուեն եկածը, արիւնտ աչքերով:

Առջի գիշերուէն քիւրսերը ետեւէն ինկեր են դինք սպանելու. շքնորհիւ իր հուժկու գարշապարներուն լեռ ապաստաններ է. հինգշաբթի առտու, կացութեան անտեղեակ, գեղին մօտեցեր է ու յանկարծ պաշարուեր է քառասուն յիսուն քիւրսերէ. երիտասարդը, յուսահատ, քաշեր է ունեցած միակ գէնքը, փոքր դանչեր մը, որուն փայլը ընկրկել տուեր է իր վրայ մոլեղանած ամենի գայիւրը: Ու օգտուելով այդ վայրկեանէն, ըսկրներ է վերստին փախչիլ. զփրակտարար դիմացէն, աչքն ու ձախէն ուրիշ նոր խումբեր դարձեալ կը պաշարեն դինքը. ճար չիկայ, արխաիրտ երիտասարդը կայծակի արագութեամբ կը յարձակի թշնամիներուն վրայ, թաւալգլոր գետին կը փռէ մէկը, նոյն մոլեղանութեամբ կը շամփրէ ուրիշ մը, որուն մարմին մէջ խրած կը մնայ սակայն դանչերը. հիմակ, զինամփ, կուսփնորովը կսկսի վանել հարիւրաւոր ճոկանները որոնք կը սուրան իր գլխուն վերեւ. արիւնլուայ, գինով, կը գարնէ կը ճեղքէ քիւրսերուն լեզուներ ու կսկսի փախչիլ, հալածուելով կատաղութեան ոռնումներ արձակող թըշնամիներէն. ու վերջապէս կը հասնի եկեղեցիին դուռը ուր, ինչպէս ըսի, շնչասպառ ինկաւ իր հայրենակիցներուն բաղկացը մէջ:

Քանիներ այսպէս փրկուեցան, բարձր պատէ մը, տան մը տանիքէն ցատկելով, կատարելով ածպարարական ամենէն զփուարին փորձերը, որոնք անշուշտ պիտի սքանչացնէին եւրոպացիէն ջնող լորտախաղացները:

Հինգշաբթի իրիկուն լուր ելաւ որ ջարդը դադարած է բարձրագոյն հրամանով, ինչպէս բարձր սկսած էր: Մնաց որ, այս հրաման ինքնին աւելորդ էր, վասն զի ամէն բան եղած լինցած էր. փախչող փախած, սպանուող սպանուած, կողոպտուելիքը կողոպտուած. ալ ամայութիւն կը թագաւորէր գեղին վրայ. կեանքը փճացած, նիւթը սպառած էր: Պոլսոյ Աթէնքը այլեւս միայն իր եկեղեցիին մէջ կը շնչէր, կը հեւար:

Մութ կոխեց. լուսինը, անողոք, անթարթ, սկաւ գարձեալ իր ամոյն ցոլքին մէջ ստուերարկել Հասգի դատարկ տուններուն ուրուային սիւռուէաները: Աղմուկները մասամբ

դագրեցան եկեղեցիին մէջ. ամէն մարդ, ինք իր մէջ ամփոփուած, սկսաւ խոկալ: Լայնարձակ բակը կը հսկէին երիտասարդներ, խմբակներ ձեւացուցած, ցնորային երազէ մը սթափածի պէս իրարու երես նայելով: Այս խմբակներուն մօտենալով, կը լսէի կատաղութեան խուլ մորնչիւններ ու ցատկոտ լուտանքներ. «Ախ, կը գոռար թիկնաւէտ ուժով երիտասարդ մը, եթէ երկու ժամ առաջ իմացած ըլլայի դէպքը, զուխս կը ժողուէի ինձի պէս քսան երեսուն հոգի. ու կը տեսնայիք ինչ կը ըլլային ան վախկոտ քիւրսերը...»

Սոսորը Չըգասալընցի էր... զոր պոռոտանք չէր իր ըրածը: Տանը մէջ յանկարծակիի եկած էր եւ փախչելէ զատ ուրիշ ճար չէր մնացած իրեն:

Եկեղեցիին աջ կողմը, Ս. Յարութեան պահարանին առջեւ, վանդակեայ պատուաններով խցիկ մը մտայ ուր գլուխի թէ վրաւոր երիտասարդ գաւառացի մը պառկած էր: Ճորեկին եկած էր, արիւնաթաթաւ, առիւծի պէս մաքառելէ յետոյ բազմաթիւ քիւրսերու դէմ: Երկու ժամ առաջ ոգեւորութեամբ կը խօսէր, բանի տեղ չէր լսել թեւէն վրայ բացուած խորունկ վէրք մը, ուսից ուխօրէն վազած էր արիւնը: Ներս մտայ, գինքը միխթարելու համար. քարացած մնացի. եկեղեցիի միտականից մը կը լուսաւորէր իր դէմքը, որ ալ չէր նշուել. ոտքը, մերկ, երկնցուցած էր զիմացի պատին ու բազուկին մէկը գլխուն նետած: Մեռած էր, մէն միայնակ, լուռ ու մունջ, աշխարհքէն լքուած, առանց մէկը ունենալու իր քով որ հսկէր իր հոգեւարքին. երեսին մօտենալով, աչքերուն անկիւն նշմարեցի երկու կաթիլ արցունք զոր իր մօրն յիշատակը խրած էր անշուշտ հոգիին խորունկէն, վերջին պահուն: Երկար չկրցայ տոկալ այդ շարժարող տեսարանին, ու գուրս նետուեցայ անիծելով սեւ ճակատագիրը, որ կը սաւառնէր հայութեան վրայ:

Հետեւեալ օրը՝ դիակները կրող թաղապետական սայլերու մէկուն մէջ նետեցին անկեղծան երիտասարդին մարմինը, ու տարին...

ՇԱՒԱՐՇ
[Շարունակելի]

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԵՐ

—)(—
ԴՐԱՆ ԶԱՆՈՂՈՒՄԸ

Ասկէց առաջ արդէն ծանուցուեցաւ թէ Դուռը իր Եւրոպայի գեսպաններուն միջոցով խընդրած էր վեց տէրութիւններու դահլիճներէն որ փութան վերջնական լուծում մը տալ Կրէտէի ինքնօրինութեան գործին, որ աւելի քան մէկ տարիէ ի վեր կը ձգձգուի եղեր, անհուն և անփոխարինելի վնաս պատճառելով կղզիին խեղճ իսլամներուն, որոնք շարունակ կը հարստահարուին ըմբոստ ու անզուսպ Կրէտացիներէն...

Դուռը կաւելցնէր ինդրագրին մէջ թէ Կրէտէի խնդրին կարգադրման այս երկարաձգումըն է միակ պատճառը որ ինք կատարուի թեսալիոյ մասին որոշուած կարգադրութիւնը գործադրելու յայտարարելով թող տալով որ իր քոստ ու հիւանդկախ զինուորները ծոյլ ու անգործ

թափառին թեսալեան դաշտերուն մէջ, բան մը չգտնելով թալանելու, հարստահարելու:

Արդ, Դրան այս աղաչական դիմումին, — որուն աղուէսական կեղծիքը ոչ մէկուն համար գաղտնիք մըն է, մանաւանդ եւրոպայի ոչ նուազ աղուէս դիւանագէտներուն, — սա կտրուի և խիստ պատասխանը արուած է. Կրէտէի ինքնօրինութեան խընդրին կարգադրութիւնը բնաւ ուէ կապ և յարաբերութիւն չունի թեսալիոյ պարպուելու գործին հետ. և հետեւապէս Դուռը ժամ առաջ ջանալու է իր բանակը գուրս հանել Յունաստանի հողերէն:

Դրան հետեւած քաղաքականութեան համար այս որոշ պատասխան կատարելով ձախողուած մըն է: Կրէտէի ինքնօրինութեան կազմակերպուելուն դժուարութիւնները տեսնելով, ինքնօրինութիւն որ հակառակ խաբուսիկ խօսքերու և երեւոյթներու թուրքիոյ ամբողջութեան պահպանումին այնքան մեծ հարուած մը տալէ չի դադրիր, Դուռը կուզէ օգտուիլ անոնցմէ՝ արդարացի կնիւններ յարուցանելու գիտումով թեսալիոյ պարպուելու անխորժ որոշման դէմ:

Եւրոպական այս զելուցագիր, Պոլսոյ գեսպաններուն ձեռքով հաղորդուած Սուլթանին և Դրան, կնու և վերջնական դաս մըն է թրքական խաբէպատիր քաղաքականութեան, որ այսպէս անյուսալի կերպով կը սահի ու կիչնայ իր ջարդուած ծրագրին բեկորներուն վրայ:

ԽԵՂՃ ԶԻՆԱՍՏԱՆ

Անգլիա, Ֆրանսա, Գերմանիա և Ռուսիա իրար կուտեն Զինաստանի մեծ պատառին համար: Այսուրեւն չորս բացած մէկգմէկ կը դիտեն, իրարու շարժումներու հետեւելով ըմբիշի արագութեամբ: Որը կուզէ երկաթուղի շինելու արտօնութիւն ձեռք բերել, ուրիշ մը նաւահանգիստ գրաւել, երրորդ մը առեւտրական անասան գիւրութիւններ կորզել: Գերմանիա արդէն նաւահանգիստ մը վարձեց տուն մը վարձելու պէս, ինչպէս նաեւ Ռուսիա. հիմակ ալ Ֆրանսա մտադիր է եղեր գրաւել Հայնան կղզին. այս պատճառաւ հարցապնդում եղեր է Անգլիոյ երեսփոխաններու ժողովին մէջ: Արտաքին գործերու խորհրդական Մ. Գըրզըն ատանկ ձեռնարկի մը գոյութիւնը կը հերքէ, ինչպէս եղաւ երբ Գերմանիա և Ռուսիա առայժմ իրենց առիւծի բաժինը առին երկնային կայսրութենէն:

ԱՒՍՏՐՈՒ

Նախարարական տագնապ մը մտաւուտ կերեայ վիէննայի մէջ: Պ. Կաւչ հրաժարելու կը պատարասուի. և զարմանալի ալ չէ,

որովհետեւ Պատէնի կոմսին յաջորդելէն՝ այսինքն երեք ամսէ ի վեր լուրջ ձեռնարկ մը չէ ըրած Պոնտիոյ կացութիւնը բարւոքելու. և կոխը առաջուան չափ վառ մնացած է Գերմանացիներու և Չէխերու մէջտեղ: Այս վերջինները հեազհետէ կը քաջալերուին, ոչ մէկ պահանջումի առջեւ չընկրկելով: Պոնտիոյ խորհրդարանը իր վերջին նստին մէջ կայսեր ուղղուած ուղերձ մը պատրաստեց որ կը ձգտի Պոնտիոյ ինքնավարութիւնն և անկախութիւնն յայտարարելու: Թէեւ ժողովին գերման անդամները գուրս ելան ժողովէն, և Պոնտիոյ ընդհ. կառավարչը յանուն կեդրոնական կառավարութեան բողոքեց այդ ուղերձին յեղափոխական բնութեան դէմ, սակայն աղքեցութիւն չըրաւ Չէխերուն վրայ, որոնք ուղերձը ստուար մեծամասնութեամբ քուէարկեցին:

Ահա այս մտահոգիչ երեւոյթներն են որ խախտած են Պ. Կաւչի դիւքը:

ԼՐՃԳՐԱԿԱՆ ՊԱՅԲԱՐ

Թուրք և պուլկար մամուլին մէջ պայքարը կը շարունակուի: Սօփիայի թերթերը, որ մեծ հետաքրքրութեամբ կը հետեւին թուրք քաղաքականութեան ընթացքին Պալքանի և Մակեդոնիոյ մէջ, միշտ երեւան կը հանեն Դրան մանուածապատ ու աչքախաբ գործերը: Վերջերս, պուլկար մէկ քանի լրագիրներ սուտ և անհիմն յայտարարած էին Սկիւպ զրկուած յանձնաժողովին ձեռք բերած արդիւնքը: Յախտեանական «Մալիմաթ» իր անարգական բանաձեւերով կը հերքէ պուլկար մամուլին այս ըրածները:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յունաստանի երեսփ. ժողովը շնորհաւորական ուղերձ զրկած է Եոթկիոս թագաւորին՝ ողջամբ փրկուած ըլլալուն սպանութեան ծանօթ փորձէն: Նախարար Պ. Սթրէթ ներկայացուցած է միջազգային քոնթրոլի ծրագիրը որուն մէկ յաւելուածական մասը կը վերաբերի դրամական կարգադրութեան: Ծանուցած է թէ Ռուսիա և Անգլիա կերաշխառներն 120 միլեոն ֆրանքի փոխառութիւնը. ասոր վերաբերեալ պայմանագիրը ի մօտոյ պիտի ներկայացունէ ժողովին: Փոխառութեան գումարը ամբողջովին պիտի դրուի միջազգային յանձնաժողովին տրամադրութեան ներքեւ, որ պիտի կարգադրէ թուրքիոյ ըլլալիք վճարումները: Մնացորդ գումարը պիտի յանձնուի կառավարութեան, տէրութեան պէտքերուն յատկացուելու համար:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

—)0(—

Նկատելով որ՝

Քաղաքին Ազգ. վարժարանաց նոր կազմակերպութեան առթիւ թաղ. Խորհրդոյս և Հոգաբարձութեան միջեւ սեղի ունեցած բանակցութիւնք ազգայնոց ու մանց կողմանէ թիւր մեկնութեանց պատճառ տուած ըլլալով, կարգ մ'անձանց եւս ասպարէզ դարձած է հանրային շահուց պաշտպանութեան պատրուակին տակ իրենց անձնական կրից յագուրդ տալու՝ անստորագրելու գորութիւններ ցրուելով ժողովրդեան մէջ :

Խորհուրդս այս առթիւ յայտարարելով որ Ազգ. երկու պաշտօնական մարմնոց մէջ կատարեալ համերայնութիւն կը տիրէ Որոշած է

Ա. Հրապարակաւ նշուակել այսպիսի ձեռնարկներ, որոնք կը նկրտին միայն ազգին մէջ երկպառակութիւններ արծարծելու եւ Ազգ. իրական շահերուն վնասելու :

Բ. Խնդրել յարգոյ ազգայիններէն որ շարունակեն իրենց վստահութիւնն ունենալու Ազգ. երկու Խորհրդոց պարսաճանաչ գործօնեութեան վրայ :

Գ. Ազգաբարեւել որ ո՛րեւէ պատեհութեամբ Ազգ. գործոց բարւոք ընթացքին դէմ խոչընդոտներ յարուցանելու յանդգնողներու նկատմամբ Խորհուրդս պիտի ստիպուի հարկ եղած օրինական միջոցներ ձեռք առնելու :

Դ. Հրատարակել զայս որոշում Ազգ. տեղական լրագրաց միջոցաւ ի միամտութիւն ժողովրդեան և ի զգաստութիւն որոց անկ է : Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ

Վ. Ատենադպիր Ատենապետ Յ. Մ. Մալի Մ. Տ. Մինասեան Վառնա, 23 Փետր. 1898

Մ Է Յ Ո Ւ Ս Ի Յ Է Թ

—X—

Ուղուն միւտեթտէն պէրու Պուլկարիայ հիճրէթ իտուպ Սթանպուլ ալտէթ իթմէյի տիւշիւնմէքտէ օլան պիր չօգ միւլլթտաշլարըմըլըն շիմտի մէյուս սիյէթէ տիւշար օլաըլարը շիւպհէսիզ տիր : Հէր չէշիտ հայլար իշիւն սէրէ սէրպէսթ Սթանպուլ կիթմէք միւսաստէսի պօշա չըգմըլ օլաըլընը պունտան էվվէլ սէօյլէմիշիւ սիր : Պիր շաիայա պազլսա, կէօյա եազընէն պաշգա պիր պէօյիւք իրատէ թէքմիլ գաղթականլարըն կէրի տէօնմէսիւնի միւսաստէսի տէճէք վէ սայիր մէնֆաաթլը շէյլէր տալի պաիւ իտէճէք իմիշ : Պունա՝ իսթէյէն ինանըն : Պիլիմ էֆքեարըմըլ շու տըր քի բօլիթիզանըն պու հալինտէ, Սուլթան Համիտին պու տէվրինտէ վէ Օրմանեան կիպի պիր առամըն պատրիարքըլընտա հայլարա հիշ պիր մէնֆաաթլը շէյ օ՛ Քաղ. Քր. Ի. Վոյնիկով Վարնա

լամաղ վէ օլմայաճագ տըր : Պու էֆքեարա գաթիէն գանի օլաըլտան սօնրա, հէր հայլըն վէ պալսուսու հէր պիր գաղթականըն պիրիւնի վաշիֆէսի աօլա մէյուս սիյէթէ տիւշար օլմամասը տըր : Սթանպուլ կիտէպիլմէմէք պու նէ պուլմէթ : Մէյուս օլմամագ գապիլ մի : Պէօյլէ տիւշիւնէնլէր չօգ վար, պա խուսուս Պուլկարիա գաղթականութիւնըմըլ տէրունիտէ :

Պու իսէ բէք պէօյիւք պիր եանըլ տիւշիւնի տիր . պէօյիւք իսկէնմէլէր վէ գօրգուլարլա Սթանպուլ կիթմէտէն իսէ պաշգա պիր մէմլէքէթտէ ալ չօգ, էյի քէօթիւ եաշամասը տահա էյի տէյիլ մի : Կէլէն եաշ տըր, հէր տիւրիւ իշիւր թապիիաշըլաճագ վէ էն ֆուգարա պիր ֆամիւս էլիւնտէն կէլէն շալըլիանլըլը տիրիզ (զլանալ) իթմէլ իսէ շիւրէսիզ կէլէնէպիլմէք տիր :

Իմտի, գաղթական միլլէթտաշլարըմըլ պիլիմ վէրէճէկիմիզ բէյ շու տուր քի էկէր Սթանպուլ, եալսու թուրքիայա կիթմէք խայլի սէպէպլէրլէ միւմքիւնիլ իսէ, աօլա մէյուս օլմայարագ պիր վազըթ տահա շու գաղթականութիւն էօմրիւնի կէլիլմէլի տիրլէր :

Հ Ա Վ Ա Ս Ի Ս Ա Թ

—)0(—

Ս Ի Ի Կ Ի Ի Ի Ի

Սթանպուլտան «Թան» չէքիլէն պիր թէլէկրաֆա էօրէ երուսաղէմտէ պուլունան վէ հէր քէսին հիւրմէթիւնէ նաիլ օլան Հիւսէին Ձատլէր վէ Հայլտի Ձատլէր նամ իքի իսլամ ֆամիլեալար մահալի հիւրիւմէթ թարաֆընտան սէրտէսթ օլունուպ, Պէրուլթա կէօթիւրիւմիւշիլէր վէ անտէն պէլիսիլ պիր մահալէ եօլա չըգարըլըլար տըր : Թէֆէրուաթ եօգ տըր : Երուսաղէմ իսլամ ֆամիլեալար պէօյիւք հէյէճանտա պուլունըյօրլար, զիրա սիւրկիւն օլընան պու իքի ֆամիլեալար հալըլէթի ֆէյլամպէրին (մարգարէ) սինսիլէսիւնէ մէնսուպ օլուպ, չօգ ասրլարտան (գար) պէրու Սուրիատա եաշամագտա ըմըլար :

Պու սիւրկիւնին սէպէպիլ եէնի միւթէսարըթ Թէվֆիզ պէյին թալէպ իթմիկի մէպլաղըն բէտ օլընմասը ըմըլ :

Պիղճէ պու սիւրկիւնին ասըլ սէպէպիլ եըլաըլտա արամալը տըր :

— Բրէնսէս Բլէմանթինին հասթալըլը աղըրաշմըլ օլաըլընտան, Բրէնսէս Մուռի Լուլզ տալի փետր. 13տէ վիէնայա կիթմիշ տիր :

— Էվլէլքի հաֆթա Պոմպայտա եումուրճագ իլլէթիւնտէն 1097 քիշի էօլմիւշ տիր :

— Վան վիլայէթիւնին եէնի վալիսի Թահիր փաշա կէլէն կիւն

Սուլթանըն հուզուրընա չըգմըլ տըր :

— Մ. Տէլիեանիէ թէհալտամիլ (սպանաճան) մէքթուլար կէօնտէրիլիպ, շիմիքի գապիլնէյէ գարըլ պիր թէլէպպիւստէ պուլունմամաընը քէնտիսիւնէ իլթար օլունմըլ տըր :

— Ձին հիւրիւմէթիւնին նիլիլթէրրատան իթմիկի իսթիգրապը, 16 միլեօն ինկիլիզ լիբասը, կէլէն հաֆթա ինչլալանմըլ վէ ֆիլաթը 100տէ 83 գարար վէրիւմիշ տիր :

ԲՕԼԻԹԻԳԱ

—)0(—

Կ Ի Ի Ի Ի Ի

Կիրիտտէ պուլունան իթալիա սօնանմասընտան պիր թօրփիտօ առայա սիլահ կէթիւրէն պիր Եունան եէլքէն կէմիսիւնի պաթըմըլ տըր :

— Կիրիտտէք Աւստրիազըրհլըլարը եազընտա օրատան չըգմագ իշիւն հազըրլանմագտա ըմըլար :

— Վիէնա կալէթալարընտան պիրիսիւնէ չէքիլէն պիր թէլէլիւրաֆա կէօրէ, Գանտիտա վէ Բէթիմօտա իրիսթիլան էհալիսիւնտէն պին ֆամիլեա գատար Եունանիսթանա հիճրէթ (գաղթել) իթմիշիլ տիր :

— Կիրիտին շարք թարաֆընտաքի իրիսթիլան ասըլարը (ապըստամը) Սըինալունկատան Գանտիայա կիտէն պիր թիւրք գալըլընը աթէլէ թուլթըլար տըր : Տէօրթ թիւրք թօքճուլար վէ իքի թալիպ պուլունան տիկէր պիր գալըլ օ սըրատա գալըլ օլուշ օլուպ, ինկիլիզ գօմանտան Ձէրմայտ պիր մուշ վաբօրը կէօնտէրմիշ իսէ տէ պիր շէյ պուլամամըլ տըր :

ԹԷՍՍԻԻԱ

Ինկիլթէրա բարլամէնթօընտա լարիճիյէ միւսթէշարը Մ. Գըրզըն՝ ահմանմէլէր (գաշնագիր) իլէ գարարըլմըլ օլան թարիտտէ Թիւրքիանըն Թեսալիայը պօշալտաճաղընը էվրօրա տէվլէթիւրի իմլտ իթմէքտէ օլաըլարը սէօյլէմիշ վէ ագսի հալինտէ թէտապիրի լաղըմէնին էլէ ալաճաղարընը իլալէ իթմիշ տիր :

Մ. Գըրզըն՝ բրէնս Եորկիօըն Կիրիա վալիլիկիւնէ նամլէտլիկի (թէկնաճութիւն) կէրի ալընմամըլ օլաըլընը սէօյլէմիշ, վէ թահմին օլընան զօրըլարըն տէֆ օլուպ օլմատըլընը պիրմէտիկիւնի պէյան իթմիշ տիր :

«Շիւպհէսիզ մէսէլէ մուհիմ տիր, հալպուքի Թեսալիանըն պօշալմասը տահա մուհիմ տիր : Թեսալիատան թիւրքիւրի կէրի չէքիլմէսի պիլէ պըրագընը, սօնրա Կիրիտ մէսէլէսիւնի գաթիէն հալլ իտէճէյիլ, տէմիշ տիր» :

ՇՆՈՐ ՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

—)0(—

Լ.Առ.Կեկի, Միւրքիւն, Գուրիե սե Պայլան, Միւրքիւն, Միւր, Նարօնի. Բրալիա թերթերը ծանուցանելով Շարժումի երեւմը, քաշալիական խօսքերով խրախուսած են զայն : Խմբագրութիւնս կը փութայ իր ջերմ շնորհակալութիւնն յայանել յիշեալ թերթերու խմբագրութիւններուն :

ՊՕՐՍԱ

Table with exchange rates for various currencies and goods. Includes items like 'Վառնա 25 ֆէրուս', 'Պոլիսիս', 'Արապա', 'ԱՐԲԱ', 'ՄԸՍԸՐ', 'ՖԱՍՈՒԼԵՍ', 'Սոսպա մուսթէլէսի'.

ՏՊԱՐԱՆ, ՆԱՐԺՈՒՄԻ

—)0(—

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցետոմս, նամակաղբիւր, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ, ինչպէս նաև պրօշիւններ : Գիներն յոյժ դիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին :

Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ

Վառնա մէջ կը վաճառուի Մուսալա, թահիլ կէօղիպէօյիւքիւնի խանութը, Սասուն սրճարանի ծխավաճառին քով եւ Ապալիւրբանան մէկիթիւն դէմը հայկական գրատունը, Ա. Ձարբանէլիանի քով :

Հ Ա Յ Ե Լ Ի

Հ Ա Ն Ի Կ

Ա.Զ.Գ.Յ.Ի. Ե. Զ.Ա.Ե.Ը.Ս.Կ.Ա.Ն. Խուրապիւր ՏՅօրիկ ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓՍ.ՁԵԱՆ

Սոյն երգիծաբանական հանգէսը, որ տարիէ մը ի վեր շաբաթը մէկ անգամ կը հրատարակուի Վառնայի մէջ, բաւական հաճելի եղած է իր ընթերցողներուն :

Տարեկան բաժանորդագրինն է Պուլկարիոյ համար 10 ֆր. վեցամսեան 5 ֆր. արտասահմանի համար տարեկան 12 ֆր. վեցամսեան 6 ֆրանք :